ները Օսմանեան կայսրութիւնից։ Այդ նոտաներով՝

1. Ռուսաստանը դրաւում է Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի շրջանները մինչեւ ապագայում որոշուելիք մի կէտը Սեւ ծովի եզերքին, Տրապիզոնից դէպի արեւմուտք։

2. Վանից ու Բիթլիսից դէպի հարաւ գտնուող Քիւրդիստանի շրջանը, Մուշի, Սղերդի միջեւ, Տիգրիսի հոսանքի, Ճեղիր-իբն-Օմարի, Ամազիդիսի գլխին իջնող լեռնագագաթների շրջանի եւ Մերգեւերի շրջանի միջեւ պէտք է գիջուի Ռուսաստանին, որի փոխարէնը Ֆրանսային կը տրամադրէ Ալա Դաղի, Կեսարիայի, Ակ-Դաղի, Եըլտըզ Դաղի, Զարայի, Ակնի եւ Խարբերդի միջեւ գտնուող հողերը։ Բացի այդ, Մերգեւերի շրջանից սկսած, արաբական պետութեան սահմանը կ'անցնէ այժմ օսմանեան երկիրը պարսկաստանից բաժանող լեռնաշղթաների գծով։

Այս համաձայնութեան առթիւ 18 Այր. 1 Մայիսին Փարիզի ռուսական դեսպան Իզվոլսկին հետեւեալ հեռագիրն է քաշում Սազոնովին.

«Կամբոնն ինձ ասաց, որ Պետրոգրատում տեղի է ունեցել Ասիական Թիւրքիայի անդամահատման համաձայնութիւնը եւ Ֆրանսական շրջանի մէջ, Կիլիկիայից բացի, մտցուած է եւ հայկական վիլայէթների մէկ մասը Սըվազով ու Խարբերդով։ Այն ինչ, Փարիզ գտնուող Պօղոս Նուպար փաշան շարունակում է իր պրոպագանդը ի նպաստ ինքնավար Հայաստանի ելքով դէպի Միջերկրական ծով Մերսինում եւ երեք պետութեանց ընդհանուր հովանաւորութեան տակ։ Թէեւ ես ձեռք եմ առնում ամէն միջոց, որ այստեղ կասկած չծագի, թէ այդ պրոպագանդը վայելում է մեր աջակցութիւնը, որեւէ թիւրիմացութիւնից խուսափելու համար, պարտք եմ համարում հրաւիրել ձեր ուշադրութիւնը այս հանգամանքի վրայ։ Չէ՞ք կարող արդեօք գտնել հնարաւոր միջոցը եւ հաղորդել ինձ, անձնական տեղեկութեան համար, վերոյիշեալ համաձայնութեան բնագիրը»։ (188)։

Սազոնովը պատասխանում է.

«Վերջնական համաձայնութեան բնագիրը կը հաղորդուի ձեզ Ֆրանսական արտաքին գործոց նախարարութեան կողմից, որի մասին, իմ խնդրով, Պալէոլոգը այսօր հեռագրեց Փարիզ։ Համաձայնութեան բուն փաստը եւ նրա բովանդակութիւն համարում է խիստ գաղտնի»։ (188)։

* * *

Բայց չիք ինչ գաղտնի, որ ոչ յայտ լիցի։ Ֆրանս-ռուսական համաձայնութիւնն էլ, ի վերջոյ, իմացուեց։ Հայկական շրջանները, սակայն, փաստից բխող եզրակացութիւնները չարին եւ չարունակեցին անփոփոխ մնալ հաւատարիմ Դաշնակիցներին եւ իրենց բոլոր յոյսերը կապել նրանց դէնքի յաղթանակի հետ։

Այսպէս հայերին խաբելուց եւ հայերին խոստացուած հողերը Ռուսաստանի եւ Ֆրանսայի միջեւ բաժանելուց յետոյ, ռուս քաղաքականութիւնը, իրեն համար, սպառուած համարեց հայկական հարցը։

Մօտաւորապէս նոյն օրերին կարուկ կերպով փոխուեց եւ ռուսների ներքին քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ. «Հայաստէր» Վորոնցով-Դաշկովի տեղը փոխարքայի պալատում նստեց «Հայատեաց» Նիկոլայ Նիկոլայեւիչը։ Կամաւորական գնդերը լուծուեցին. Ադդ. Բիւրոյի գործունէութիւնը փաստօրէն վերացուեց։ Այլեւս հայերը հարկաւոր չէին ռուսներին։

Այս քաղաքականութեան ցայտուն արտայայտութիւնը տեսնում ենք Սազոնովի՝ Կովկասեան փոխարքայ Նիկոլայ Նիկոլայեւիչին գրած նամակի եւ վերջինիս պատասխանի մէջ։

Սազոնովը 1916 թ. 14-27 Յունիսին Նիկոլայ Նիկոլայեւիչին ուղղեց հետեւեալ նամակը — թիւ 540.

«Հատարեա ամբողջ Մեծ Հայաստանի գրաւուելը մեր զօրքերից եւ նրա գալիք ներմուծումը Ռուսական կայսրութեան սահմանների մէջ հերթի են դնում այդ շրջանի ապագայ կազմակերպութեան խնդիրը։ Թէեւ այժմ, պատերազմը դեռ չվերջացած, թերեւս վաղաժամ է փորձել հաստատուելու լիովին որոշ ու կատարեալ հիմքերը մեր ներքին քաղաքականութեան նուաճուած երկրում, բայց եւ այնպէս ինձ թւում է խիստ օգտակար պարզել